Հավելված 1

ՀՀ ներքին գործերի նախարարի

2024 թվականի մարտի 01 »-ի N 1035 -Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության բնակչության տվյալների մշակման վարչության բնակչության պետական ռեգիստրի վարման բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության վերակազմավորմամբ, աշխատանքների ծավալների ավելացմամբ պայմանավորված, անհրաժեշտություն է առաջացել բնակչության տվյալների մշակման վարչության բնակչության պետական ռեգիստրի վարման բաժնում ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետ (թվով 1):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) առնվազն միջնակարգ կրթություն.

2) հայերենի իմացություն.

3) աշխատանքային ստաժ չի պահանջվում.

4) համապատասխան ոլորտի իրավական ակտերի իմացություն և անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև վեց ամիս ժամկետով

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Մասնակցել Ծառայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներից վարույթների արդյունքում պատրաստվող փաստաթղթերի տպագրության համար անհրաժեշտ տվյալների ստացման աշխատանքների իրականացմանը.

2) Մասնակցել քաղաքացիների անհատական հաշվառման տվյալների կուտակման միջոցով ձևակերպվող և ինքնությունը հավաստելու նպատակով տրամադրվող փաստաթղթերի տպագրման աշխատանքների իրականացմանը.

3) Մասնակցել վարույթների արդյունքներում պատրաստվող բոլոր անձը հաստատող փաստաթղթերի տպագրման և համապատասխան ստորաբաժանումներին տրամադրման, տպագրված փաստաթղթերի հաշվառման, ըստ անհրաժեշտության՝ առաքման, անձը հաստատող փաստաթղթերի տպագրման ժամանակ խոտանված փաստաթղթերի հաշվառման, ակտավորման և ոչնչացման աշխատանքներին:

5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները

1) Փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակային կտրվածքով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը:
2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Աշխատանքների գնահատման չափանիշները

1) Համապատասխան ծրագրային միջավայրում ստանալ և ստուգել անհատական հաշվառման տվյալներ.

2) Ծառայությունում իրականացված վարույթների արդյունքում ձևավորված ցանկերի համաձայն անհատականացնել և տպագրել անձը հաստատող փաստաթղթեր.

3) ՈՒղեկցման թերթիկներով հանձնել տպագրված փաստաթղթեր.

4) Կազմել անվավեր, սխալ տրված, անձը հաստատող փաստաթղթերի ոչնչացման ակտեր: